

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

ԼԻԱՆԱ ԿԱԶՅԱՆՑ ՍՊԸ-ն ԱՄԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/24 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում  
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	Ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը
163	Աստրադեզ Բիօքսի	Աստրադեզ Բիօքսի	Ախտահանիչ միջոցն իրենից ներկայացնում է խտանյութ՝ անգույնից մինչև բաց դեղին գույնի, թափանցիկ, թույլ, յուրահատուկ հոտով հեղուկ: Որպես ազդող նյութ՝ պարունակում է $20,0 \pm 0,5\%$ ջրածնի պերօքսիդ, պոլիհեքսամեթիլենգուլանիդին հիդրոքլորիդ (ՊՀՄԳ), ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ (ՉԱՄ), պոլիհեքսամեթիլենբիգուլանիդ հիդրոքլորիդ (ՊՀՄԲ), թթուների կոմպլեքս, ՄԱՆ, ֆունկցիոնալ, կայունացնող և հակակոռոզիոն հավելումներ: Միջոցի 1%-ոց ջրային լուծույթի ջրածնային իոնների խտության ցուցանիշը $pH = 4,5 \pm 1,5$ : Միջոցի պիտանելիության ժամկետը՝ պահպանման պայմաններին հետևելով և արտադրողի փակ փաթեթավորմամբ՝ 3 տարի է : Միջոցի լուծույթներն օժտված են մանրէասպան ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ (ներառյալ տուբերկուլոզի հարուցիչները՝ թեստավորված <i>Mycobacterium terrae</i> DSM 43227-ի թեստ-շտամի կուլտուրայի վրա, լեգիոնելոզի, հատուկ վտանգավոր վարակների՝ ժանտախտի, խոլերայի, տուլարեմիայի և սիբիրյան խոցի (սպորասպան

			<p>ազդեցություն) հարուցիչների), վիրուսասպան հատկություններով (արտաընդերային հեպատիտների, ՄԻՎՎ-վարակի, պոլիոմիելիտի, ադենովիրուսի, Էնտերովիրուսի, ռոտավիրուսի, «ատիպիկ թոքաբորբի» (SARS), գրիպի, պարագրիպի, հերպեսի, թռչնի A/H5N1 և խոզի H1N1 գրիպի, արտաընդերային և ընդերային հեպատիտի, Կոքսակի, ECHO, Էբոլայի, Չիկայի, Մարբուրգի և այլ հեմոռագիկ տենդերի վիրուսների նկատմամբ և այլն), սնկասպան հատկություններով (այդ թվում կանդիդոզի և տրիխոֆիտիայի հարուցիչների, բորբոսասնկերի նկատմամբ՝ թեստավորված <i>Aspergillus niger</i> թեստ-շտամի կոլտուրայի վրա), սպորասպան հատկություններով և մանրէազերծիչ ազդեցությամբ: Կիրառվում է ցանկացած տեսակի մակերեսների, գույքի, սպասքի, սպիտակեղենի, օդի և այլն, ախտահանման և մաքրման համար: Ինչպես նաև, բժշկական գործիքների, այդ թվում՝ ջերմասնկայունների լվացման, ախտահանման և մանրէազերծման համար; Էնդոսկոպերի և նրանց հետ օգտագործվող գործիքների լվացման, բարձր մակարդակի ախտահանման համար: ՈւՆԻ ՀՀ ԱՆ կողմից հաստատված հրահանգ: :</p>
--	--	--	---





## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

ЛИАНА КАЧЬЯНЦ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЦУЦЧ-ЕЦДЦПЗР-25/24 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	товарный знак	технические характеристики
163	Астрадез Биокси	Астрадез Биокси	